ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 520

17 մարտ 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Նալբանդյան.

Ձեզ ենք ուղարկում Ալավերդի համայնքի ղեկավարի 2018 թվականի N 85-Ա որոշումը:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար՝ Ա. Էվոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018 թվականի N 85-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 10.04.2003 թվականի N 384-Ն որոշման ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) շտաբ:
2. ՔՊ շտաբի պետ նշանակել համայնքի ԲԿՏ գործունեությունը համակարգող Զավեն Շահմուրադյանին.
   2.1 Զավեն Շահմուրադյանին՝ մշակել և մինչև 2018 թվականի մարտի 20-ը համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:
3. Ալավերդի համայնքում ստեղծել տարահանման հանձնաժողով և համայնքային հետևյալ քաղաքացիական պաշտպանության ծառայությունները՝ համապատասխանաբար նշանակելով ղեկավարներ.
   3.1 Տարահանման հանձնաժողով, նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Վարոսյան.
   3.2 Կապի և ազդարարման ծառայություն, պետ՝ «Արմենտել» ՓԲԸ-ի Հյուսիսային տարածքային կենտրոնի ճարտարագետ Ռաֆիկ Մնոյան.
   3.3 Ինժեներական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար Հրայր Նազարյան.
   3.4 Բժշկական ծառայություն, պետ՝ «Ալավերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ Հովիկ Ավետիսյան.

3.5 Տրանսպորտային ծառայություն, պետ՝ «Քարափտրանս» ՍՊԸ-ի տնօրեն Կամո Բաբայան.

3.6 Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն, պետ՝ «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի «Թումանյան» էլ. ցանցի անվտանգության ճարտարագետ Արթուր Հախվերդյան.

3.7 Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար Վահե Պապինյան.

3.8 Հասարակական կարգի պահպանման ծառայություն, պետ՝ ՀՀՈ ԼՄԿ Թումանյանի բաժնի պետի տեղակալ Աշոտ Տիտանյան.

3.9 Կոմունալ-տեխնիկական ծառայություն, պետ՝ «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Կիրակոսյան.

3.10 Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն, պետ՝ համայնքապետարանի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար Հովիկ Շալաղոյան.

3.11 Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն, պետ՝ համայնքի ղեկավարի խորհրդական Ռաֆայել Միքայելյան.

3.12 Գազասպասարկման ծառայություն, պետ՝ համայնքապետարանի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գույքի կառավարման բաժնի պետի պաշտոնակատար Արա Աբելյան:

4. Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ երկշաբաթյա ժամկետում մշակել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ծառայության կանոնադրությունը, նախապես այն համաձայնեցնելով մարզային քաղաքացիական պաշտպանության համապատասխան ծառայության և Լոռու մարզային փրկարարական վարչության հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2018թ. մարտի 15
ք. Ալավերդի